

ՄԻՆԳԵՉԱՌԻՈՒՄ ԳՏՆՎԱԾ ՀԱՅԱՏԱՌԻ ԲԵԿՈՐՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ազրեղանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հնագետների վերջին տարիներս Մինգեչաուրում հայտնաբերված հնագիտական նյութերից ուշադրության արժանի են հայկական գրեր պարունակող բեկորները, որոնք, զբախտաբար, մինչև այժմ մնում են չուսումնասիրված և չվերծանված վիճակում:

Հայկական գրեր պարունակող այդ նյութերի բեկորների մասին առաջին հաղորդումը տպագրվել է Ազրեղանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Զեկույցագրեր»-ի 1948 թվականի № 9-ում գետնադրված Մինգեչաուրի 12-րդ հնագիտական տեղամասում հայտնաբերված հնագիտական նյութերի մասին հնագետ Ա. Մ. Կադիևի տեղեկագրում: Այնուհետև այդ բեկորների մասին ասված է հետևյալը. «Հայտնաբերված շինության պատերից մի քանիսը զարդանկարված են փորագրի օրնամենաներով, որոնք ունեն կամ շատ կարծր և կամ կավճի նման փրփուրուն կազմվածք: Օրնամենաները պատրաստված են փարդյակների, նրկաշափական ձևերի և այլ զարդագծերի նմանությամբ: Օրնամենաների մի քանիսի վրա կան արձանագրություններ»¹ (ընդգծումը մերն է— Ա. Ա.): Հնգվածում տպագրվել է բեկորներից մի քանիսի լուսանկարը, որի մեջ, զբախտաբար, վատ սևտուշի հետևանքով, որոշ տառեր աղավաղված են ներկայացվել:

Հայտնաբերված այդ բեկորների մասին 1951 թվականին միջանկյալ ձևով խոսել են նաև հնագետներ Բ. Մ. Վահրգյուր և Վ. Պ. Յոմենկոն՝ Մինգեչաուրում հայտնաբերված տաճարի մասին իրենց գրած արժեքավոր հոդվածում: Նրանք ևս տպագրել են բեկորների լուսանկարն առանց վերծանության և մեկնաբանության²:

Ձեռնարկելով տվյալ բեկորների ուսումնասիրությանը, հայկական հնագրություն հիման վրա մենք նախ աշխատեցինք պարզել տվյալ գրության մոտավոր ժամանակը, առանց որի անհնար էր պարզել վերծանության հետ կապված որոշ հարցեր: Նշված գրերի գրածները համեմատության մեջ դնելով հայկական հին գրությունների հետ մենք եկանք այն հաստատ համոզման, որ տվյալ բեկորների գրերը նմանվում են երուսաղեմի հայոցի խճանկար (մոզաիկ) արձանագրությունների գրերին, որոնք 6—7-րդ դարերի գրություններ են համարվում³, Մրենի արձանագրության գրերին, որը 637—640 թվականների է համարվում⁴, Մաստարայի արձանագրության գրերին, որը 640 թվականի է համարվում⁵ և այլն:

¹ Բ. Մ. Կադիև և Վ. Մ. Վահրգյուր, «Средневековый храм в Мингечауре» (см. «Материальная культура Азербайджана», т. II, Баку, 1951 г., стр. 80—102).

² Տե՛ս «Zeitschrift des Deutschen Palästina Vereins», B. XXXIV.

³ Ի. Ա. Օրբելի, «Шесть армянских надписей» (см. «Христианский Восток», 1913 г., т. II, ч. I, стр. 32).

⁴ Գրեթե ևս չկա. Նովոսելյան, «Պատմություն հայ հնագրության», Վաղարշապատ, 1913 թ., էջ 174:

¹ Ս. Մ. Կազիև, «Новые археологические находки в Мингечауре» (см. «Доклады АН Аз. ССР», № 9, 1948 г., стр. 398).

Բեկորների հայկական առումների մեջ առանձնապես հատկանշական է Ա-ի երկրորդ սյունագծին զուգընթաց իջնող գիծը, որը ներկարում է հունական ալֆայի նման և փոքր ինչ թևավորված դեպի վերև, Ս-ի երկրորդ սյունագծի երկու անգամ կարճ լինելը, Յ-ի արարական 3 թվանշանի ձև ընդունելը, Բ-ի զբլխամասը հունական բժոի նման կլորելը և այլն, որոնք բացահայտ կրում են 6—7-րդ դարի հնության կնիք: Ըստ որում, գրություններ չունի դեռ բառանշատում, ինչ որ հաստի է հին հայկական գրությունը:


Մյուս կարևոր հարցը, որ նախ աշխատեցինք նույնպես պարզել, արձանագրության ծավալի հարցն է— ի՞նչ մեծություն է ունեցել նա: Այդ առանձին զեմարություն չէր ներկայացնում, քանի որ արձանագրությունը գրված է եղել կլոր պատկաձե մի շրջագծի վրա, որի բեկորներից մեկի կորությունը կարկինի միջոցով չափելուց հետո զեմար չէր որոշել շրջագծի մեծությունն ամբողջությամբ: Պարզվեց, որ տվյալ շրջագծի վրա կարելի էր տեղավորել 65—70 տառ միայն: Եթե նկատի ունենանք, որ մեկ հատած բեկորները պարունակում են միայն 39 տառ, ապա պակաս տառերի թիվը մտաւալորապես կլինի 30—35, որին, այդքան տառերով էլ մենք պետք է լրացնենք տեքստը:

Արձանագրությունն սկսում է բեկորներից մեկի վրա փորագրված տեքստարաժան մի խաչից, որի ներք թևերը հավասար են իրար, իսկ ներքին թևը փոքր ինչ երկարում է: Այս խաչը պարունակող բեկորի վրա, խաչից անմիջապես հետո, տեքստի սկզբից մնացել է միայն երեք տառ— ԻԺԱ... Այս տառերը, մեր կարծիքով, բաղկացած են երկու բառերից— Ի նախդիրից և ԺԱ թերի բառից:



Բերի բառի շարունակությունը պահել է մի այլ բեկոր, որն ունի ՄԱ տառերը և Ն-ի զբլխիկի և ձախ սյունագծի հաջիվ նկատելի հետքերը:

6. Ա. Գ. Արրահամյան, «Հայկական պատկերաֆիա», Երևան, 1948 թ., էջ 61—66:



Բարերախտաբար, բեկորներից մեկի վրա պահվել են թերի բառի մնացած երեք տառերն ևս՝ ԱԿԻ: Վերջին Ի տառի սյունագծի վերին մասը ջարդվել է, իսկ առջևի Ա-ից առաջ հաջիվ նկատվում է Ն տառի աջ թևի մի մասը: Այսպիսով, տեքստից, վերև բերված բեկորներով ամբողջանում է երկու բառ՝ Ի ԺԱ ՄԱ Ն ԱԿԻ...:




«Ի Ժամանակի», «Ի թուականի», «Յամի» բառերից հետո վիճադիր արձանագրությունների մեջ սովորաբար հիշվում է թվականը: Մեր ներկա տեքստում ևս, բնական է, պիտի հիշված լինեի թվականը: Այստեղ մեկ օգնություն են հասնում արձանագրության մնացած երեք բեկորները, որոնցից մեկն ունի ՆՍՆԵՐ, մյուսը՝ ՈՐԳ, իսկ երրորդը՝ ՆՐՈՐԳ տառերը, որոնք, անշուշտ, եղծված թվականի մասերն են կաղմում: Բայց այստեղ մեր առջև ծանանում է մի այլ զեմարություն ևս— ի՞նչ թվական է գործ ածված արձանագրության մեջ:

Մինչև 8-րդ դարը հայկական թվականի մասին խոսք լինել չի կարող, որովհետև հայկական թվականի գործածությունը քաղաքացիություն է ստանում միայն 8-րդ դարից հետո: Քիչ հավանական է նաև, որ գործած-


7. Տե՛ս Ա. Գ. Արրահամյան, «Տարեթվերի և ամսաթվերի գործածությունը հայ մատենագրության մեջ», «Էջմիածին», 1956 թ., N N 1, II և III:

ված լինելն համեմական, սյուժայական, տա-
րական, քրոնիկանի և կամ հիշրաչի թվական-
ները, որոնք գործ են անվել մեկ-մեկ միջ-
նադարյան հայ մատենագրություն մեջ: Կա-
կածանքներ կարող են լինել միայն արար-
չության թվականի նվազամասը, որը մի քանի
անգամ գործ է անվել 7-րդ դարի հայ հիշա-
տակարաններում: Սակայն եթե նկատի ունե-
նանք պատկաձև շրջանակի սահմանափակ
մեծությունը, քանի որ արարչության թվակա-
նը հաշվելու դեպքում սխալ անպայման հիշ-
վելն նաև թվականի տեսակը և թվականի հա-
զարավոր, հարյուրավոր, տասնավոր և միա-
վոր թվերը: — Իսկ այդքան ներքին մի տեսա-
տան հարկ է տեղավորել տվյալ շրջանակի մեջ,
— ուստի քիչ հավանական է, որ արարչու-
թյան թվականը եղած լինի: Բացի այդ, «Ի
ժամանակի» բառերի գործածությունը, ինք-
նին, անթաղանջ է տալիս, որ այսպես սխալ
լինի ո՛չ թե միաշար որևէ թվական, այլ թա-
ղանջների կամ կայսեր զահակալության տա-
րիներ, ինչպես որ հիշված է 6—7-րդ դարե-
րի հայկական մի շարք արձանագրություննե-
րի մեջ: Այս նկատառումով անհրաժեշտ է
լրացնել վերև բերված երկու բառերը՝ կաղ-
մելով գործածված համապատասխան տաս-
նավոր և միավոր թվերը:

Ի ԺԱՄԱՆԱԿԻ վերջին բեկորի ԱԿԻ-ի վեր-
ջում նկատվում է շարգված 6 տառի գծա-
նշանը: Այդ հիման վրա մեզ հասած բեկորի
հաջորդը համարում ենք ԵՄՆԵՐ տառերն ու-
նեցող բեկորը, որով բառն ամբողջանում է
ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ևնով:




Տվյալ բառից շարգված բեկորների մասն
են կաղմում երկու այլ բեկորներ, որոնց մե-
կի վրա կարելի է կարգավ առանձին Բ տա-
ռը, որը ԵՐԵՄՆԵՐՈՐԴ բառի երկրորդ տառն է
և շարգվել է ԵՄՆԵՐ տառերը պարունակող
բեկորի առջև: Այդ նույն բառի անվիճելի
մյուս բեկորն է ՈՐԴ տառերը պարունակող
բեկորը, որի վերջից նկատվում է Ի տառի
սյուժայական ներքին մասը, ուստի տվյալ բա-
ռը սխալ ամբողջացնել սկսականով՝ ԵՐԵՄ-
ՆԵՐՈՐԴԻ ևնով:



Բայոր վերջում սխալ նկատի ունենալ, որ
թաղանթների զահակալության տարիները
մի քանի տասնյակից ավելի չեն անցնում,
ուստի և մենք կասկածանք չունենք վերձա-
ված բառի հշտության վերաբերյալ:

Առանց տարակուսանքի վերձանվում է նաև
հաջորդ բառը, որը սխալ լինի միավոր թվա-
կանը: Միավոր թվականի բառի շարգված բե-
կորն է ԵՐՈՐ տառերը ունեցող բեկորը, որի
վրայից թեպետև տառերից մի քանիսը ջնջվել
են, սակայն նրանց հիմքի գծիկները պարզ
նրկում են:



Այս բեկորի սկիզբը, բարեբախտաբար,
պահել է մի տառի միջին մասից դեպի աջ
ձգվող տառի ելունը, որը միավոր ինք տառե-
րի մեջ, ԲՈՐԴ-ի առաջ, կարող է լինել միայն
«Հինգերորդ» բառի Դ տառը, ուստի այդ թերի
բառը մենք լրացնում ենք, անվիճելի, ՀԻՆ-
ԳԵՐՈՐԴԻ ևնով:

Այդ նույն բառի բեկորն է հանդիսանում
ԴԻ տառերը պարունակող բեկորը, որի Դ
տառի գլխավոր մասը չի նրկում, իսկ Ի տա-
ռի սյուժայական ներքին մասը շարգված է: Այս
ԴԻ բեկորը, ինչպես ասացինք, ՀԻՆԳԵՐՈՐԴԻ
բառի վերջին ԴԻ տառերն են:

Այսպիսով, տեսնելով առաջին մասը ամբող-
ջանում է՝ «Ի ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԵՄՆԵՐՈՐԴԻ
ՀԻՆԳԵՐՈՐԴԻ...»:



Հարց է առաջանում— չէ՞ր կարող պատահել, որ ՈՐԴԻ և ՐՈՐԴԻ թերի թվական բառերը գրված լինեին հապավված ձևով, այսինքն փոխանակ «երեսներորդի հինգերորդի», գրված լինեին «երորդի երորդի»։ Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ տվյալ թվական բառերը հապավված ձևով չեն տրվել, քանի որ այդ դեպքում թվականի համար գործածված տառերը անպայման պիտի վերցված լինեին կետերի մեջ և վրան հապավման նշան՝ «պատիվ» ունենային, այսինքն՝ ո՛չ հապավման նշանի հետքն է երևում և ո՛չ կետերի։

Հին հայկական փիմագիր տեքստերում, սովորաբար, թվականից հետո գրված են լինում «ամի գահակալութեան» կամ «ամի թագաւորութեան» բառերը. մեր տեքստում էս, թվում է, որ նրանք պիտի լինեին, սակայն, հաշվի առնելով շրջանակի ծավալը, մենք կարծում ենք, որ մեր տեքստում պիտի գործածված լինեի ԱՄԻՆ կարճ ձևով, առանց «թագաւորութեան» բառի։ Մեր այս առաջարկած վերծանությամբ, տեքստը կլրացվեր «Ի ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԵՄՅՆԵՐՈՐԴԻ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԱՄԻՆ...» ձևով։

ԱՄԻՆ բառին հետևում է արձանագրության տեքստի ամենից դժվար և ամենից վիճելի բառը— այն անձնավորության անունը, որի գահակալության 35-րդ տարում գրվել է արձանագրությունը։

Այդ անձնավորությունը, անկասկած, պիտի լինեի թագավոր, կաթողիկոս կամ իշխան, այլ անուն լինել չէր կարող։ Այստեղ մեզ օգնության է գալիս արձանագրությունը գրել տվողի անունը։ Այդ անձնավորությունը, ինչպես հետո կտեսնենք, ներսեհ իշխանն է։ Հասկանալի է, որ արձանագրությունը գրող իշխանն իր նման մի այլ իշխանի անունը

հիշել չէր կարող։ Քիչ հավանական է, որ նա հիշած լինեի նաև կաթողիկոսի անուն։ Միակ անձնավորությունը, որ կարող էր հիշված լինել, պիտի լինեի միայն բյուզանդական կայսրներից մեկն ու մեկը, որոնք մի շարք անգամներ հիշված են 6—7-րդ դարի հայկական արձանագրությունների մեջ. օրինակ՝ Բագրևանդի արձանագրությունն ունի «Քսաներորդ ամսոյն աստուածապահ նրակդ թագաւորի...»⁸, Ալամանի արձանագրությունը՝ «Քսան և ևսին ամսոյ Հերակղի բարեպաշտ թագաւորի...»⁹, Արուսի արձանագրությունը՝ «Ի և Թ ամի Կոստանդինի...»¹⁰ և այլն։

Արձանագրությունը, հնագրական ավյալնություն, ինչպես վերը տեսանք, գրված է 6—7-րդ դարերում։ Մեզ մնում է պարզել, թե այդ դարերում գահակալող կայսրներից ո՛ւմ անունը կարող է հիշված լինել։

Մեր կարծիքով 6-րդ դարի կայսրներից ո՛չ մեկը հիշված լինել չէր կարող, քանի որ այդ շրջանի բյուզանդական կայսրերը թշնամական, պառակտողական քաղաքականություն են վարել Հայաստանի նկատմամբ, ատելի են եղել հասարակական լայն շրջաններում և չեն հիշված մեզ հասած արձանագրություններից ո՛չ մեկի մեջ։ Չէին կարող հիշված լինել նաև 7-րդ դարի երկրորդ կեսում գահակալող բյուզանդական կայսրները, որովհետև Անդրկովկասն արաբական գերիշխանության տակ ընկնելուց հետո հասկանալիորեն տեղական իշխաններից ո՛չ մեկը չէր համարձակվի տալ բյուզանդական կայսեր անուն, մանավանդ գրել տալ որպես մեծաբանք արձանագրությունների մեջ։ Միակ բյուզանդական կայսրը, որը շատ ու քիչ հեղինակություն է ունեցել հայ ֆեոդալական ղեկավար շրջանում, հանդիսացել է Հերակլը, որը և մի շարք անգամներ հիշված է հայկական արձանագրությունների մեջ։ Մեր այս եզրակացությունն ավելի հավանական է, քան նկատի ունենանք, որ այդ շրջանում իշխած բյուզանդական գահակալներից Կերկար ապրել է միայն Հերակլը և նրա 35-րդ տարում կարող էր գրված լինել արձանագրությունը։ (Հերակլը գահակալել է 610—641 թվականներին)։

Արձանագրության վերծանության մեջ մենք ավելի հարմար ենք համարել ՀԵՐԱԿԼԻ անունը գործածել ԵՐԱԿԼԻ ձևով։ Բացառված չէր, իհարկե, որ նա կարող էր գրված լինել ՀԵՐԱԿԼԻ ձևով։

8. Կ. Կոստանյան, «Վիմական տարեգիր», 1923 թ., էջ 1։

9. Նույն տեղում։

10. Н. А. Орбели, «Багаванская надпись», (см. «Христианский Восток», т. II).

Այսպիսով, մեր արձանագրության տեսակի այս մասն ամբողջականանում է Հետևյալ ձևով. «Ե ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԵՄԻԱՆԵՐՈՐԴԻ ՀԻՆՔԻՆ ԲՈՐՈՐԴԻ ԱՄԻՆ ԵՐԱԿԵԼԻ»:

ԵՐԱԿԵԼԻ անունից անմիջապես Հետո պիտի գրված լինի արձանագրության գրել ավագի անունը: Ո՞վ է գրել ավել այդ արձանագրությունը:

Առաջին անգամ մենք այն կարծիքն ունեինք, որ առջևում բերված այն բեկորը, որի վրա մնացել են ԵՄՆԵՐ տառերը, պիտի Համարել արձանագրություն գրել ավագի անունը և պիտի վերանայ «Են Ներսէ» ձևով: Այդպես էլ մենք առել էինք Բարբի Հնագիտ մեր մասնագետներին: Մակայն երկրորդ անգամ Բարբով գտնված ժամանակ ուշադիր ուսումնասիրելով ավագ բեկորը Համարվեցինք, որ այդ բեկորի գրերը թվականություն մասն են կազմում:

Ինչպես երևում է, փշացել է ամբողջությամբ արձանագրության միջին մասը, ուստի այն պիտի վերականգնել միայն ԵՄՆԱԳՐՈՒՄՅԱՆ, արամեականության հիման վրա:

Արձանագրությունը գրել ավագի անունը պարզելու հարցում մասամբ մեզ օգնում են նրա վերջին բառերը, որոնք կարելի է լինում, մնացած բեկորների հիման վրա, վերականգնել: Այդ բառերը վերաբերում են արձանագրություն գրել տալու նպատակին և շենքի անվանը: Արձանագրությունը, ինչպես կատեններ, գրվել է եղիշի անվան տառերի կառուցման կապակցությամբ:

Ինչպես պարզվել է, Աղբրեզանական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի Հնագետների Միջնադասարանում Հայտնաբերած տառերը հանդիսանում է աղվանական: Հայ մատենագիրներից Հայտնի է Նույնպես, որ աղվանների մոտ ամենից սիրված ու մեծարված սուրբը Համարվում էր եղիշի առաքյալը, որի համար նրանք իրենց կենտրոնական տառերն էին կառուցել: Հայկական մատենագիրների տեղեկություններից երևում է, որ աղվանական այս կենտրոնական տառերը գտնվել է ո՞չ թե Ղարաբաղի Զորքերի գավառում, ինչպես ենթադրել են ուսումնասիրողներից ու ճանապարհորդներից ոմանք¹¹, այլ ավելի հյուսիսում՝ Ներկայիս ուղիների ապրած վայրերում:

Հստ աղվանական ավանդության, որը գրի է առել Մովսես Կաղանկատվացին, եղիշի առաքյալը նախատակվույց Հետո թաղվում է Ուռկան կոչվող ավանում, ապա նրա աճյունը «անտի տեղափոխեցին Ներս-Միհրայ սուրբ

ուխան, որ այժմ կոչի Զրվաթիկ»¹²: Սակայն Նույն Օրբելյանը նույնպես այս տառերը հիշում է մարթնացոց կապակցությամբ, որոնց մի մասը, ըստ Օրբելյանի, գալիս և Հատա տառովում է «ի Միհր-Ներսէ Հայ վանքն, որ է Զրվաթիկ»¹³։ Եղիշի վարդապետության մեջ ևս այդ նույն տեղեկությունը կրկնվում է. «Սուրբն Եղիշ և կեալ լաշխարհն Աղուանից ի դիզն, որ կոչի Գիւ... և էջ նախ ի դաշտին Զարդունի... և սարանին դնա բարբարոսն... կրա նշխար սրբոյն ի վանքն, որ կոչի Զրվաթիկ»¹⁴:

Վերև բերված տեղեկությունների մեջ ուշադրության արժանի է եղիշի անվան տառերի Միհր-Ներսէի կամ Ներս-Միհրի անվանվելը: Այդ անունը կապված չէ ո՞չ տեղադրության և ո՞չ ժամանակակից գահակալող այլ անձնավորության հետ: Մեր կարծիքով այդ անունը կապված է եղել վանքի կառուցողի անվան հետ նրա հիշա է մեր ենթադրությունը, որ Միջնադասարանում Հայտնաբերված տառերը աղվանական կենտրոնական տառերն է, ապա նրա կառուցողն է եղել Ներսէ: Մենք, մեծ վերապահությամբ, արձանագրության հեղինակը համարում ենք Ներսէին և տեսար լրացնում են ՆԵՐՍԵՆԵՆ ԲԱՆԵՐՈՒՄ:

Ի դեպ, եղիշի տառերի կապակցությամբ ցանկանում ենք կովկասագետների ուշադրությունը ներկայացնել 1724 թվի մարտի 20-ին ուղիների Պետրոս առաջինին ուղարկած դիմումն այն մասին, որ եղիշի անվան վանքը գտնվում է ավերակ վիճակում¹⁵: Այս տեղեկությունից պարզ երևում է, որ եղիշի այս վանքը ոչ մի կապ չունի Ղարաբաղում գտնված վանքի հետ: Այդ տեղեկությունը հիմք է տալիս մեզ նաև մտածելու, թե Միհր-գեղաուրում Հայտնաբերված վանքն արդյո՞ք ուղիների դիմումի մեջ հիշված վանքն է: Այդ հարցի առաջադրումը տեղին է, չի՞նչ նկատի ունենանք, որ Պետրոս առաջինի էլնի Իվան-Կարապետը մյուս ճանապարհների փոստապետության պատճառով հարկադրված է եղել Բարբից դեպի Ղարաբաղ մեկնել ուղիների այս շրջանով: Այս պատճառով է, երևի, Միհր-գեղաուրի մոտով անցնող այս Հա-

12. «Մովսէսի Կաղանկատուացոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912 թ., էջ 12:

13. «Սահմանոսի Օրբելյան Պատմութիւն նախնային Արտական», Թիֆլիս, 1911 թ., էջ 159:

14. Հ. Հ. Տաշյան, «Տուրքական Հայերէն ձեռագրաց մատենագրարներն Միջինարեւելից ի Վիեննա», Վիեննա, 1895 թ., էջ 29 և 60:

15. Ա. Արքուշաճյան, «Ուղիների դիմումը Պետրոս I-ին» (տե՛ս «Էջմիածին», 1922 թ., էջ 39-40):

11. Տե՛ս Բարխուդարյանի «Երցախ», էջ 234, Լեռնի «Եւմ Հիշատակարան», էջ 296, Հ. Հ. Ոսկյանի «Երցախի վանքերը», էջ 117 և այլն:

նապարհը մինչև այժմ կոչվում է «էլի յո-
լի»¹⁶:

Հարցի էությունը չի փոխվում, եթե առար-
կություններ լինեն տաճարի տեղագրության
հարցում, այսինքն, կասկածանքներ առաջա-
նան այն մասին, որ գտնված հայատառ բե-
կորները այդ տաճարինը չեն, այլ այդտեղ են
բերված եղել այլ վայրերից: Այս դեպքում
մեզ համար կարևորը ավելի բեկորների
պատկանելության հարցն է:

Դժվար է անվիճելիորեն պարզել Ներսեհի
անձնավորությունը: Մեր կարծիքով հավա-
նական է, որ նա Շիրակի ապոստոլական
պատրիկ Ներսեհ Կամսարականը լինի, որը
հայտնի է որպես «շինող եկեղեցեաց»¹⁷,
այսինքն այն անձնավորությունը, որը կա-
ռուցել է Թալինի եկեղեցին 7-րդ դարի երես-
նական թվականներին:

Արձանագրության ՆԵՐՍԵՀ բառից հետո
արամարանորեն հետևում է «շինեցի», «կա-
ռուցեցի», «ճիմնարկեցի» բայերից մեկն ու
մեկը: Այնքան, որքան արձանագրությունը
գրված է տաճարի ավարտման կապակցու-
թյամբ և բոլորածե նման պոստ պատրաստ-
վել է ո՛չ թե շենքի հիմնադրման, այլ ա-
վարտման առթիվ որպես հուշատախտակ,
վերև հիշված երեք բայերից ամենահավա-
նականը «շինեցի» բառն է:

Այսպիսով, արձանագրության առջև բեր-
ված տեքստը լրացվում և ամբողջականա-
նում է հետևյալ ձևով. «Թ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԱՅՍ-
ՆԵՐՈՐԴԻ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԱՄԻՆ ԵՐԱԿԼԻ ԵՍ
ՆԵՐՍԵՀ ՇԻՆԵՑԻ...»:

Արձանագրության հաջորդ բառը, ըստ
պարզ տրամարանության, պիտի լինի շենքի
անունը՝ եկեղեցի, տաճար, բաղարան, վկա-
յարան: Այնքան, որքան որ մնացած բեկոր-

ներից մեկի վրա պարզ կարդացվում են ԱՌԱ
տառերը, մենք հավանական ենք համարում,
որ այն եղած լինի ՔԱՒԱՐԱՆ բառը:

Մի այլ բեկորի վրա մնացել է առանձին
Բ տառը, որը գուցե «Քաւարան» բառի Բ-ն է:



1954 թվականին Բաքվում գտնված ժամա-
նակ մենք բեկորների մեջ տեսած ենք եղել
և թղթի վրա արտանկարել ենք նաև Արևու-
րեկոր՝ ԲԱՆՅԱ և ԵՂ, որոնք, ղժարատարար,
մենք շտեպանք վերջին մեր այցելության
ժամանակ: Չենք կարծում, թե մենք շփոթած
լինե՞նք այն: Այդ բեկորի ԲԱՆ տառերը մենք
համարում ենք նախորդ «քաւարան» բառի
վերջին երեք տառերը, իսկ ՅԱ տառերը հա-
մարում ենք ՅԱՆՈՐԻ բառի առաջին եր-
կու տառերը: Պարզ է, որ եթե Ներսեհը
կառուցել է կրոնական մի շենք, ապա նա
նվիրված պիտի լիներ որևէ սրբի, ինչ-
պես ունեն եկեղեցական կառուցումների կա-
պակցությամբ գրված արձանագրություննե-
րի մեծ մասը: Այսպես, Ներսեհ Կամսարակա-
նի Թալինի արձանագրության մեջ ասվում է.
«ԵՍ ՆԵՐՍԵՀ... ՇԻՆԵՑԻ ՋԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՐԻ
ՍՐԲՈՅ ԱՍՏՈՒԱՄԱՄԻ»¹⁸:

Մեր արձանագրության մեջ ևս Ներսեհը,
մեր կարծիքով, կառուցել է «քաւարան»-ը և
նվիրել այն «Յանուն սրբոյ...» մեկին:


Արձանագրության մեջ «սրբոյ» բառը կա-
րող էր գրված լինել վերև բերված լրիվ ձևով
և կամ կրճատ՝ ՍՐՅ. այդ բառը հին հայ մա-
տենագրության մեջ տեղումնական համարվող
այն յթբ բառերից մեկն է, որը, սովորա-
բար, գրվում էր հապավված ձևով:

Ո՛ւմ է նվիրված եղել կառուցված «քաւա-
րան»-ը: Այս հարցի պարզարանման մեջ
օգնության է գալիս վերը հիշված ԵՂ տառե-
րը պարունակող բեկորը, ինչպես և տեքստի
սկզբի օգտագործած խաչ պարունակող բե-
կորը, որի վրա, խաչից առաջ, երևում է
պարզ երկու տառ՝ ՅԻ: Մեր կարծիքով,
փնտրված այդ անունը պիտի լինի «Շղի-

16. С. М. Казнев, «Археологические рас-
копки в Мингечауре» (см. «Материальная
культура Азербайджана», Баку, 1949 г.,
стр. 10).

17. Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառա-
րան», Երևան, 1948 թ., էջ 33:

18. Գրեգորի կաթ. Հովսեփյան, «Քարակց հայ
հապրության», էջ 173:



շայի» բառը, որի առաջին երկու տառը պահել է վերը հիշված առաջին բեկորը, իսկ ՅԻ՝ վերջինը: Սկզբում մենք առաջնորդում էինք ավելի բառի հարմարական ձևի ճշտության նկատմամբ, թե ինչու՞ ու պիտի լինի «Նդիշայի» և ոչ «Նդիշի»: Բայց ուշագիր դնելով կազմակապող ահարը համոզվեցինք, որ այդ բառի հարմարական ձևն և ճիշտ ձևը «Նդիշայի» ձևն է, որը համապատասխանել է հավանաբար ավելի բառի ազդանական արտասանությանը:

Այսպիսով, Մինդեշաուրում գտնված հայկական տառեր պարունակող արձանագրության մեր ենթադրական վերծանությունը հետևյալն է.

«Ի ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԵՄՆԵՐՈՐԴԻ ՀԻՆԳ՝
ԵՐՈՐԴԻ ԱՄԻՆ ԵՐԱԿԼԻ ԵՍ ՆԵՐՍԵՆ
ՇԻՆԵՏԻ ԶԱԽԱՐԱՆ ՅԱՆՈՒՆ ՄԲՅ ԵՂԻ-
ՇԱՅԻ»:

Մենք անհրաժեշտ ենք համարում նորից զգուշացնել, որ մեր այս վերծանությունը չենք նկատում վերջնական. շարդուիշուր եղած և բավական պակաս մի արձանագրության բեկորներից հազիվ հնարավոր եղավ գծել նման մի սովորագիր միայն, վերջնական խոսքն այժմ պատկանում է Ազգրեշանական ՍՄՌ Գիտությունների ակադեմիայի մեր հնագետներին. եթե նրանց հաջողվի արձանագրության գտնված վայրի մոտերքում գտնել թեկուզ մի քանի նոր բեկորներ, ապա մենք կկարողանանք այդ արձանագրության մասին խոսել ո՛չ թե կռահումներով, այլ ի վիճակի կգտնվենք առանց կռահումների վերծանել տեքստը: Պիտի նկատի ունենալ, որ Մինդեշաուրի նորագույն հայկական արձանագրությունը հնագրական մեծ արժեք ունեցող հին հայկական արձանագրություններից է և արժանի է հատուկ ուշադրության:

